

իւրոյ՝ Լեւոն Դ գրէր զինքն (թէ եւ ՚ի մօրէ). «*Կարող է բարձր ՚ի պայծառ եւ բարի արմատոյն Ըռաւրինաց*». եւ զայս կամ զայսպիսիս թարգմանաբար գրէին նոցա եւ արեւմտեայ պետք թղթակիցք. որպէս առանձինն սահմանեալ եւ գրեալ կան ՚ի հին դիւանս Վենետաց՝ վերնագրութիւնք թղթոց առաքելեաց առ թագաւորն Հայոց եւ առ արքայագունս եւ մեծամեծ իշխանս. եւ առաջնոյն ընծայի յոյժ մեծաձայն իմն կոչումն, *De Altitonanti genere Rupinorum, Armenie Rex*, որ ըստ բառին նշանակէ *բարձրորոտ*, կամելով արդեօք ասել *հռչակաւոր* եւ կամ նման սմին բան:—



Վասն այլ ինչ գիտելեաց զպէսպէս դրամոց Լեւոնի՝ յիշեցեն ընթերցողք զոր ինչ աւանդեցաք եւ պատկերօք ցուցաք ՚ի դրուագի Բաժտանն Այասոյ. այլ զի ՚ի տախտակի անդ գծաձեւ միայն կարգեալ է, աստանօր յանդիման լիցի եւ համագոյն իսկականին, փորել կամ ստուար ոսկի դրամ, որ կշռէ աւելի քան $q^{7\frac{1}{10}}$ գրամ, որ է առաւել քան զկրկին հռչակաւոր վենետկեան *տուկատի*. (տես յէջ 379): Գերագոյն իմն եւս՝ եւ յաղթականապէս արարեալ է Լեւոնի, հատանել դրամ լատինագիր, գրաւական նուաճմանն Անտիոքայ, որպէս տեսցի ՚ի մօտոյ՝ ՚ի կարգի պատմութեան այնր խնդրոյ:

Ե. Պաշտօնեայք եւ Ձիաւորք

Ի պատուոյ անուանս աւագ որերոյ յիշեալս ՚ի Լամբրունեցոյն՝ հասարակեալ է *Պարոնն*, ՚ի Լատինաց առեալ անդէն ՚ի մուտս նոցին յարեւելս. գտանեմք, թէ եւ ոչ յաճախ, նաեւ զմակդիրն *Սիւր*, ստորին քան զպարոնն. այլ թէ ո՛րպէս կոչէին զփոքր մարդիկն՝ ըստ պատուոյ անուան, ոչ զիտեմ, զի բաց յերկուց այտի՝ ոչ գտանի ՚ի պատմութեան. իսկ այլք վերոյիշեալք ոչ լոկ անձանց՝ այլ պաշտօնէից են պատուանուանք. զորոց կայ մեզ մի առ մի ճառել համառօտիւ: